# ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

**2015_2018 թ.**

**ՎԱՆԱՁՈՐ 2015**

**Ամբիոնի առաքելությունը**

2015-18թթ. պատրաստել ՀՀ կրթության բնագավառում առաջադրված չափանիշերին բավարարող, ժամանակակից գիտական հետազոտություններ, մշակումներ իրականացնող, սոցիալ-մշակութային արդյունավետ գործունեություն ծավալող բարձրորակ կառավարման մասնագետներ:

**Ամբիոնի զարգացման տեսլական ծգտումները.**

1. Այսօր ուսանողներին մատուցվող գիտելիքներն ամբիոնի կողմից դիտարկվում է որպես մարդկային կապիտալի արդյունավետ ներդրում, որն ուղղակիորեն նպաստում է հասարակության մտավոր պոտենցիալի զարգացմանը: Այս դիրքորոշումը պահանջում է ամբիոնի կողմից դասավանդվող բոլոր դասընթացների մատուցման որակի նկատմամբ պատշաճ ուշադրություն, ուսանողների կողմից իրականացվող ինքնուրույն աշխատանքների կատարելագործում:
2. Յուրաքանչյուր ուսանող անհատ է, որի նկատմամբ ամբիոնը պարտավոր է մատուցել բարձրորակ կրթական ծառայություններ և պատշաճ վերաբերմունք:
3. Յուրաքանչյուր դասախոս իր կողմից նախընտրելի գիտական ուղղվածության ոլորտում պարտավոր է լինել արհեստավարժ՝ գործելով «սովորեցնելով նաև սովորում ենք» հայտնի կարգախոսով:
4. Ամբիոնի աշխատանքային գործունեությունը ուղղված է բուհի՝ որպես ՀՀ կրթական համակարգի արժանի բաղադրատարրի վարկանիշի պահպանմանը:
5. ՀՀ կրթական համակարգին առաջադրվող արդի գործընթացներին ակտիվորեն ինտեգրում՝ նպաստելով բուհի վարկանիշային պատկերի կատարելագործմանը:

**Ամբիոնին առաջադրված հիմնական խնդիրները.**

1. Մասնագիտական կրթության որակի բարձրացման ժամանակակից տարբեր ծրագրերի վերջնական ներդրման աշխատանքներում բուհի ղեկավարությանը աջակցում, որոնք բխում են միջազգային ISO9000:2000 ստանդարտների պահանջներից և Բոլոնիայի հռչակագրի դրույթներից:
2. Ուսումնական դասընթացների բովանդակության մշտական թարմացում և կատարելագործում:
3. Գիտահետազոտական հիմնարար և կիրառական տարբեր աշխատանքների իրականացում, որոնք ուղղված կլինեն ամբիոնի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:
4. Բուհի նյութատեխնիկական բազան համալրած ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվորեն կիրառում ուսումնական գործընթացում:
5. Բուհ-աշխատաշուկա-գործատու փոխադարձ կապի սերտացմանը ակտիվ մասնակցություն:
6. Ուսանողների հոգևոր զարգացմանը նպաստում:

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

| Նպատակ | Խնդիր | Պատասխանատու /կատարող/ | Համագործակցություն | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/ | Սպառնալիքներ, ռիսկեր |
|---|---|---|---|---|---|---|
| **Կրթական գործունեություն** | | | | | | |
| □ իրականացնել «Կառավարում», «Սերվիս» բակալավր և «Հանրային կառավարում», «Կրթության կառավարում» մագիստրատուրա մասնագիտությունների ՄԿԾ-ի վերամշակման քաղաքականություն,<br>▪ Մշակել տնտեսագիտական դասընթացների դասավանդման նորարական ձևերի կիրառման մեթոդաբանություն:<br>▪ Նպաստել գործնական պարապմունքների վարման գործընթացի կատարելագործմանը՝ ելնելով պրակտիկ տնտեսագիտական նյութի, մասնագիտական գրականության և առաջադրված խնդիրների հրատապության արդի պահանջներից:<br>▪ Անընդհատ թարմացնել ամբիոնի ուսումնամեթոդական բազան՝ հատուկ ուշադրություն դարձնելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանն ինչպես դասընթացների դասավանդման, այնպես էլ ուսանողների կողմից կատարվող ինքնուրույն աշխատանքներում:<br>▪ Ամբիոնում կազմել ուսումնամեթոդական նյութերի հրապարակման հեռանկարային պլան և ժամանակացույց: | ▪ Պարբերաբար վերանայել և թարմացնել մասնագիտական դասընթացների դասավանդման առարկայական ծրագրերը և փաթեթները:<br>▪ Շարունակել թարմացնել ամբիոնի մասնագիտական գրականության ֆոնդը և ուսանողներին մշտապես ապահովել թարմացված գրականությամբ:<br>▪ Ամբիոնում ստեղծել էլեկտրոնային գրադարան՝ լայնորեն կիրառելով նրա թարմացման և ընդլայնման համացանցի ընձեռած արդի հնարավորությունները.<br>▪ մեթոդական ցուցումներով ժողովածուներ, ընթացիկ գիտելիքների ստուգման տարբեր թեստեր, դասընթացների ծրագրեր, քննական և ընթացիկ ստուգման հարցեր, կուրսային և դիպլոմային աշխատանքների թեմաներ,<br>▪ էլեկտրոնային դասագրքեր և ժողովածուներ,<br>▪ հոդվածներ, մասնագիտական գրքեր, մենագրություններ:<br>▪ Դասախոս-ուսանող համագործակցության կապը կազմակերպել ուսանողակենտրոն հիմունքներով՝ կիրառելով համացանցի և ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած լայն հնարավորությունները:<br>▪ Ակտիվացնել տնտեսագիտության և տնտեսական աշխարհագրության կաբինետի գործունեությունը՝ կրթական և մեթոդական աշխատանքների ուղղությամբ:<br>▪ Պարբերաբար անցկաց- | Ամբիոնի ամբողջ կազմը | Համագործակցել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ | 2015-18 թթ. | «Կառավարում» և «Սերվիս» մասնագիտություննեի կրթական ծրագրեր, «Կառավարում» մասնագիտության ինքնավերլուծություն | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | նել դասալսումներ, դասախոսությունների, սեմինարների քննարկում ներ: Ուսումնասիրել լավագույն դասախոսների աշխատանքային փորձը:<br>▪ Օգնել սկսնակ դասախոսներին դասավանդման վարպետության հմտությունների յուրացման գործում: | | | | | |
| **Գիտահետազոտական** | | | | | | |
| ▪ Նպաստել գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներհոսքին: Ելնելով Բոլոնիայի գործընթացի պահանջներից՝ կազմակերպել և իրականացնել գիտակրթական գործունեություն, տեսական, փորձարարական և կիրառական-հետազոտական աշխատանքներ:<br>▪ Կազմակերպել ուսանողների ընդգրկումը հետազոտական և գիտաարտադրական աշխատանքներում: Մասնակցել այլ կրթօջախ ների և գիտահետազոտական կազմակերպությունների հետ պայմանագրային կապերի հաստատման գործընթացին:<br>▪ Տնտեսագիտության, տնտեսական աշխարհագրության և սերվիսի հրատապ հարցերի շուրջ կազմակերպել գիտական կոնֆերանսներ, բանավեճեր և քննարկումներ, ինչպես նաև ապահովել մեր ուսանողների մասնակցությունն այլ գիտական օջախներում կազմակերպվող նմանատիպ միջոցառումներին:<br>▪ Ապահովել ֆակուլտետի ուսանողների մասնակցությունն համալսարանի ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին: Պարբերաբար կազմակերպել ֆակուլտետի ՈՒԳԸ ժողովներ, սեմինարներ: | ▪ Քննարկել ամբիոնի աշխատակիցների կրթական, գիտահետզոտական, մեթոդական աշխատանքները և գրախոսել:<br>▪ Մասնակցել նոր գիտական ուղղությունների առարկայական փաթեթների և ծրագրերի մշակման աշխատանքներին:<br>▪ Հրատարակման ներկայացնել լավագույն ուսանողական աշխատանքների թեզիսները:<br>▪ Քննարկել և կարծիք հայտնել պաշտպանության ներկայացվող մագիստրոսական ատենախոսությունների վերաբերյալ:<br>▪ Քննարկել տնտեսագիտական տարբեր ուղղություններին վերաբերող ուսումնական և ուսումնամեթոդական գրականություն:<br>▪ Ամբիոնի դասախոսական կազմի համատեղ ուժերով կազմել և տպագրության ներկայացնել «Տնտեսագիտության տեսություն» և «Սերվիսի հիմունքներ» ուսումնամեթոդական ձեռնարկներ, որոնք նպատակաուղղված կլինեն ուսանողների կողմից դասընթացի յուրացման մատչելիության բարձրացմանը: | Ամբիոնի ամբողջ կազմը | □ Համագործակցել համալսարանի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի հետ<br><br>□ Նպաստել ամբիոնի դասախոսական ամբողջ կազմի մասնակցությանը «Տնտեսության զարգացման տեսական և ինստիտուցիոնալ հիմնախնդիրները» թեմայի շրջանակներում իրականացվող հետազոտական աշխատանքների | 015-18 թթ. | □ Տնտեսագիտության տեսության ամբիոնի ամենամյա գիտամեթոդական սեմինարներ<br>□ Տնտեսագիտության տեսության ամբիոնի կողմից կազմակերպվող ամենամյա ՈՒԳԸ գիտաժողովներին ուսանողների մաս նակցություն | □ Երիտասարդ կադրերի մոտիվացիայի թույլ մակարդակ<br><br>□ Այլ բուհերի հետ իրականացվող համագործակցության տարբեր ծրագրերի թույլ մասնակցություն |
| **Սոցիալ- դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ոլորտ** | | | | | | |
| □ Նպաստել ուսանողների անհատականության ձևավորմանը և ստեղծագործական ակ- | □ Նպաստել ուսանողների ենթագիտակցության մեջ ձևավորված էկոլոգիական | Ամբիոնի ամբողջ | Համագործակցել համալսարանի և | 2015-18 թթ. | «Կառավարում» և «Սերվիս» | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| տիվության դրսևորմանը:<br> Ամբիոնի ողջ կազմով ակտիվորեն մասնակցել բուհում առկա դաստիարակչական մըթնոլորտի հետագա զարգացմանը: | մշակույթի հետագա կատարելագործմանը` շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված տարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով:<br> Նպաստել ուսանողների ակտիվ կենսակերպի զարգացմանը: | կազմը | ֆակուլտետի ղեկավարության հետ | | մասնագիտություննե րի կրթական ծրագրեր, »Կառավարում» մասնագիտության ինքնավերլուծություն | |
| **Որակի ապահովում** | | | | | | |
| Ամբիոնի ողջ անձնակազմի ուժերով աջակցել որակի ներքին ապահովման բազմաբընույթ աշխատանքներին,<br> Ապահովել որակի ապահովման կենտրոնի և ամբիոնի համագործակցությունը:<br> Որակի ներդրմանն աջակցող դրամաշնորհային ծրագրերում ապահովել ամբիոնի մասնակցությունը,<br> Ամբիոնում իրականացնել կրթության որակի ապահովման և գնահատման ներքին աուդիտի քաղաքականություն: | Կրթության որակի ապահովման նպատակով իրականացնել մշտադիտարկման անցկացման մշակված քաղաքականություն,<br> Ապահովել ամբիոնում ՈԱ գործընթացների մշտական կապը շահակիցների հետ:<br> Ամբիոնի ամբողջ կազմով մշտապես մասնակցել բուհում իրականացվող ՈԱ բարելավման գործընթացներին: | | Համագործակցել որակի ապահովման կենտրոնի հետ | 2015-18 թթ. | «Կառավարում» և «Սերվիս» մասնագիտություննե րի կրթական ծրագրեր, «Կառավարում» մասնագիտության ինքնավերլուծություն | Պրոֆեսորադասախոսական կազմի ՈԱ մոտիվացիայի ցածր մակարդակ, ինչը պայմանավորված է սոցիալական խնդիրներով:<br> Գործատուների մոտիվացիան համագործակցության մեջ մակերեսային է:<br> Բուհի ներքին և արտաքին շահակիցների մի մասը ակտիվություն հանդես չի բերում ՈԱ-ը միտված բարեփոխումներին |
| **Կառավարման համակարգի կատարելագործում** | | | | | | |
| Իրականացնել «Կառավարում» և «Սերվիս» մասնագիտությունների կրթական ծրագրերի քննադատական վերլուծություն` դիտարկելով դրանց ուժեղ ու թույլ կողմերը,<br> Նախաձեռնել վերլուծությունից բխող ծրագրային փոփոխություններ:<br> Ամբիոնի նիստերում քննարկել «Կառավարում» և «Սերվիս» մասնագիտության | Համակողմանի գնահատել ծրագրերի մատուցման փաստական որակը և ռեսուրսային ապահովվածությունը,<br> համադրել ծրագրի փաստական ելքային արդյունքները դրա համար սահմանված ակադեմիական ստանդարտների հետ:<br> Ապահովել ծրագրի որակի և տնտեսական համապատասխանության գնահատումը | Ամբիոնի ամբողջ կազմը | Համալսարանի և ֆակուլտետի ղեկավարության հետ | 2015-18 թթ. | «Կառավարում» և «Սերվիս» մասնագիտություննե րի կրթական ծրագրեր, «Կառավարում» մասնագիտության ինքնավերլուծություն | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| կրթական ծրագրերում ներգրավված ուսանողների և շրջանավարտների կարծիքները ծրագրի որակի վերաբերյալ,<br> վերագնահատել ծրագրի արդիականությունը և պահանջարկվածությունը աշխատաշուկայում,<br> Ծրագրերի վերանայման արդյունքները համապատասխան եզրակացությամբ քննարկել ուսումնական ստորաբաժանման և բուհի կառավարման մարմինների հետ: | ծրագրերի շրջանավարտների և գործատուների կողմից,<br> Ներկայացնել ծրագրային թիմի հաշվետվությունը՝ ծրագրի արդյունքների և անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ: | | | | | |
| **Կարիերայի և շրջանավարտներին աջակցություն** | | | | | | |
| Կատարելագործել ուսումնական մասնագիտությունների գծով պրակտիկայի բովանդակությունն ու կառուցվածքը՝ հիմք ընդունելով ուսանողների մոտ գործնական հմտությունների և կարողությունների ձևավորման ժամանակակից պահանջները:<br> Ակտիվացնել կապերը գործատու հաստատությունների կոլեկտիվների հետ: | Գործատուների հետ համատեղ մշակել ուսումնական պրակտիկայի արդյունավետության բարձրացման պլաններ:<br> Նախապատրաստել և անցկացնել ուսանողների գիտահետազոտական պրակտիկան հանրապետության գիտական տարբեր հաստատություններում (ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտ, ԵՊՀ, ՀՊՏՀ, և այլն): | Ամբիոնի ամբողջ կազմը | Համալսարանի և ֆակուլտետի ղեկավարության հետ | 2015-18 թթ. | «Կառավարում» և «Սերվիս» մասնագիտություննե րի կրթական ծրագրեր, «Կառավարում» մասնագիտության ինքնավերլուծություն | |

**Տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ՝ Ն. Բարսեղյան**